52. ԹԱՔԱՎՈՐԻ ԱԽՋԻԿ

Ճամփա կէրթեր մե հալեոր մարթ. հ'ետեւեն գնաց հասավ մեկ չեհել տղա, ըսեց.—Բարի լուս քըղի, ափո՛, ըտ հ'ո՞ւր կէրթաս։

— Կէրթամ քաղաք։

— Ես լե կէրթամ քաղաք։

— Էրթանք, լա՛ո, իրար հետ։

Մե քիչմ' է իրար հետ ճամփա զացին, տղեն ըսեց.—Ափո՛, բան մը ըսիմ քըղի. խո չըս նեղենա։

— Չէ, լա՛ո, հ'որի՞ կը նեղենամ։

— Ափո՛,—ըսում է,—մեկ պատմութունըմ էրե, հեքաթըմ էրե, էրթանք, հ'երկան ճամբախ է։

Ափոն ըսեց—Վուալլա, լա՛ո, ես ուհո՛ւ[1] բան չըմ գինա։

Ըսեց.—Ափո՛, մե բանըմ ըսե, ես քըղի կը շալկիմ. մինչ որտեղ օր պրծավ, մուրազին հասավ, ընտեղ լե կիշում։

Ափոն էլի ըսեց.—Լաո, ուհո՛ւ լը չըմ գինա։

Տղեն ըսեց.—Օր ըտմալ է, ես կըսիմ, գու ընձի շալկե։

Ափոն համաձայնվավ։ Տղեն ըսեց, ընի շալկեց, հարի հասան թաքավորի քաղաք, պալատի հ'առեչ հասան, տղեն ըսավ վերչի խոսքը՝ «Ընգոնք հասան ուրանց մուրազին, մենք լե հասնինք մըր մուրազին»։

Ըտ վախտ տղեն իշավ շալկեն, մատը ճըտտացրեց ու գնաց։

Ափոն լը՝ օր շունչ կտռավ, նստավ, զուր պառեկ զարկեց պա-

---

1 Բոլորովին (Ս. Բ.)։

տին, հրոաթավ։ Թաքավորի ախչիկ վերևից իշկեց, տեսավ՝ շատ իրան դժար էրևաց։ Ըսավ՝ «Զիտա հալվոր կանչիմ վերև, թ՚իտա ի՞նչ բան էր էղավ»։

Կանչեց հալվորին, ըսեց.—Ա՜փո, ա՜փո։—Օր ըսավ՝ «Ափո՜, ափո՜», հալվոր իշկեց վիրև։ —Ափո՜, արի հ՚ուտա։

Ափոն հ՚ելավ գնաց թաքավորի ախչկա մոտ։

— Ափո՜, նըստի։

Ափոն նստավ։

Ախչիկը հարցուց ափոյին.—Ափո, իտա ի՞նչ բան էր էղավ։

— Ի՞նչ բան, լաո,— ըսեց ափոն։

— Էտ ի՞նչ բան էր, օր տղեն հ՚ելեր էր քու պառեկ։

Հալվորը պատմեց ուր գլխի էկած։

Ախչիկ ըսեց.— Ափո, հեչ բան մ՚էլ չը կա՞ըցար պատմեր։

Ըսեց.— Չէ։

Ըսեց.— Ափո, հըմկա ես կըսիմ, գու անգամ էրե։ Ես կըսիմ, գու սովրի, օր մըկել անգամ ըտմալ մարթիկ քու շալակ չելնին։— Ես,— ըսեց,—մըր քաղքի մեչ ծռա մե հարուստի տղի վրեն։ Նամակներով ըղ մըր խոսքեր մեկըս կըսենք։ Ըտրվով չը կշտացա, օր մը լե նամակ գրի տղին, օր հ՚անքան[1] ժամանակ կիգաս մըր փանջարի տակ, օր ես քըզի քաշիմ վերև։ Տղեն էկավ, քաշի վերև։

Ցերեկ կպահենք իտա ըշկապի մեչ, իսկ գիշեր կը պառկենք՝ իմալ մարթ ու կնիկ։ Ապռանք ըտոր հետ էրկու ամիս։ Մեկ լը հ՚անքան վախտ մեր ձիապա արաբը գուռ թըխթըխցուց։ Ըսի.—Կարելի է, մտե՛ք։

Բացեց գուռ, մտավ։

— Բարի իրիկուն,— ըսեց,— թաքավորի ախչիկ։

— Բարով,—ըսի,—հազար բարի, արաբ ջան։

— Ես էկեր եմ էսօր, օր գու քու գլոխ իմ հետ մեկ էնիս։

Ես ըսի արաբին խելոք բառով՝ «Արաբ, հ՚ընցի գնա քու գոմ, էտ լավ խոսք չէ»։

Արաբ ըսեց.—Չէ, թաքավորի ախչիկ, ես քու մոտ օղորթմա իմ էկի ըտոր համար։

Ես տեսա օր արաբ օղորթմա ըտոր համար էր էկի, վրեն բռացի, ըսեցի.— Գնա՝, հեռեցի, անկիրթ մուռտառ, հիմի կըսիմ իմ հորըն, շալլաթին բերիմ, գլոխտի կտռիմ։

---

1 Ուշ (Ս. Բ.)։

Արաբ ըսավ.—Շատ աղե՜կ, կտրիս իմ գլոխ։ Տղին քաշիր մըշ քու օթխին, ցերեկ պահիս մըշ ըշկապին, գիշեր կէղնիք մարթ ու կնիկ, հըմկա ես անկիրթ իմ, դու լա՞վն իս։ Հըմկա ես կէրթամ, գիշեր բարի։

Արաբ դուռ շըխկացուց ու գնաց։

— Ափո՜, կը լսի՞ս։

— Կը լսիմ, լաո՜։

— Ես շիվարա մանցի, օր զըտ բան արաբ հ՝իմցեր ի։

Էփ օր զիմ ծռուկ տղեն լսեց զըտ խոսք, հ՝ելավ ըշկապեն, ըսեց.—Արի զիմ գլոխ կտրե, վերչացու, իմ համար քու անուն չը կոտրի։

— Ափո՜, լսի՞ր։

— Լսի, լա՜ռ։

— Ես հ՝ելա, տղի գլոխ կտրի, պլուլեցի խալու մեչ, պոլերըն քանդի, դրեցի պոլերու տակ ու լացի։ Քիչ մը լե հ՝ետև ընձի բաղդավոր գիտցա՝ ընդրա համար օր արաբ հ՝իկա, էլ չըմ վա՜խենա։

Մեկել հ՝իրկուն էլի դուռ թխկթըխկցուցին։ Ըսի.—Մտե՜ք։—Արաբն էր էլի։

— Բարի հ՝իրկուն, թաքավորի ախչիկ։

— Բարև, արաբ ջան։

— Հա՜, խելքի էկե՞ր իս։

— Ի՞նչ խելք, արաբ։

— Էրեկ ես քըզի բան մը ըսեցի։

Էտ վախտ իմ հիերս հ՝ելավ վըր արաբին։

— Գնա՜ իտա տեխեն,—ըսի ու լավմ՝ է քվրտեցի։

— Շատ աղեկ,—ըսեց,—կէրթամ։ Ես գեշ իմ, դու լե լավ իս։ Տղին մորթիր, պլուլեցիր մըշ խալուն, մըտըցիր պոլերուն տակ, դու էղար աղե՜կ, ես լը էղա գե՞շ։ Գիշե՜ր բարի,—ըսավ ու ես վազի դռան քով, իմ պառեկ զարկի դռան, կայնա։ Ըսի.—Արաբ, ինչ օր կըսիս, թըխ քու խոսքն էղնի։

— Չէ՜, չէ՜,— ըսեց,— ես կէրթամ։

Շատ աղաչեցի, ընդոր վերցրի բերի նըստըցի վըր քոռսուն։ Արաբ լե՝ «Չէ՜, կէրթամ»։ Վերչ ես գացի փատտըվա արաբին, իմ էրեսներ քսի ուր էրսըներու վրեն, պագեցի, շեհեկ տղա էր, համոզեցի, համաձայնվավ։

— Արաբ,— ըսի,— հ՝ելի գնա գոմը, խորոտիկ մը լվացվի, հ՝անքան վախտ ամեն օր արի։

Արաբ գնաց լվացվավ ու էկավ։ Հ՝ելանք, մարթ ու կնկա պես քնանք, մըչ տեղին մըղի զրուցեցինք։ Ըսի՝ «Արաբ, բախտըտ եմ ընկի, դու քու աստված, մարթ չիմանա, հրտմըլա լե կապրինք հարի մեռնելուս»։

— Ափո, լսի՞ր։

— Լսի, լա՛ռ։

— Ապրանք արաբի հետ մե էրկու ամիս լը, օր մը լե արաբ կելնա կէրթա բազառ պըտրտելու, տեսնա խայվից[1] գոլ ու զուռնի ձեն կուգա։ Արաբ կմտնա խայվեն։ Կելի կը տեսնա օր վազըրի ձիապան ու նազըրի ձիապան կուտին ու կը խմին։ Արաբին կը կանչին ուրանց մոտ։ Կը նստին իրեքով մե տեղ ու կը խմին։ Նազիրի ձիապան կըսե.—Լըցեք ըստաքներ։—Կլցին ըստաքներ։

— Խմի՛նք նազըրի ախչկա կենաց, օր ընդոր քանի մը անգամ աչքով էներ իմ, ընձի բան չըսերի։ Էնի իմ ծռուկն ի։—Կխմին։

Վազըրի ձիապան լը կըսե.—Խմինք վազըրի ախչկա կենաց, օր ընդոր էրկու անգամ պագեր ինք, է՞ն լը զիմ ծռուկն ի։

Արաբ, ասսու կրակ թափի քու վրեն, էնտից կելնի, կըսե.

— Լցե՛ք, խմինք թաքավորի ախչկա կենաց, օր էս լը էղավ էրկու ամիս օր իրար հետ կը պառկինք վըր օսկի կառավաթին։

Հ՝ըմմեն լը իրար հետ կըսին.—Աղեկ, շատ աղեկ, ամմենք զուր ծռուկ կիրակի օր թըխ վերցու, էրթանք մեշի մեչ հ՝ախպուրի վրեն, քեֆ էնինք։ Որ օր զուր ծռուկ չը բերեց, թքունք զուր էրես, էնինք խայտառակ։

— Շատ բարի։

Խոսք տվեցին մեկ մեկին ու դուս էկան խայվից։

Հ՝իրկուն արաբ էկավ տունը, պառկանք, զրուցեցինք։ Ըսեց.—Գինա՞ս, վազըրի ու նազըրի ձիապանների հետ խայվեն խոսեր ինք, օր ամեն զուր ծռուկ առնե, կիրակի օր էրթանք մեշի մեչ, հ՝ախպուրի վրա քեֆ էնինք։

Ես ըսի.— Վա՜յ, արաբ, էտ ի՞նչ կըսիս, իմ գլոխըս կտրե, ընձի ըտմալ տեխ մը՛ տանե։

Արաբ ըսեց.—Չէ՞, ես քու գլոխ չըմ կտրի ու կը տանիմ։ Օր չը տանիմ, զիս կէնին խայտառակ։ Օր չը գաս, կէրթամ քու հոր կըսիմ, բերիմ պոլը քանդիմ, ցուց կիտամ քու գաղտնին։

— Լսի՞ր, Ափո։

— Լսի, լա՛ռ։

---

1 Պետք է լինի խայվախանից՝ սրճարանից (Ս. Կ.)։

— Ես կրնա՞մ չամաձայնվիմ։

Կիրակնօրը արաբ առավ զուր ֆայթոն, էկավ խաս բախչի դուռ կայնավ, ես լը հ՚նլա գացի մե դանակ վերցի զիմ հետ, զիմ շալ առա վըր իմ գլխուն, գացի խաս բախչեն, նստա ֆայթոն ու գացինք։ Գացինք տեսանք օր օղորթմա, վազըրի ձիապան վազըրի ախչիկ, նազըրի ձիապան նազըրի ախչիկ, լա՚վ սեղան բացած ու նստած, ղմզի օր տեսան, հ՚ելան էկան մըր հ՚առեչ։ Գացինք ու նստանք։

Դանակ իմ ծոցն էր։ Ես ըսի զիմ մըտքին. «Ուրանք քեֆովնան, ես դանակ քաշիմ ու զարկիմ մըչ իմ սրտին ու սրպանիմ»։

Ըտըցնե հ՚ետև ի՚նչ կըսին, թըխ ըսին։

— Լսի՞ր, Ափո՚։

— Լսի, լա՚ռ։

— Խմեցին հ՚ըմմեն լը, քեֆովցան ու պատան։ Ես քաշի զիմ դանակ, օր զարկիմ ընձի, մեկ լե մտածի՝ «Ըտոնք հ՚ըմմեն լը պատած ին, էն օր ընձի զարկիմ, էրթամ ուրանց զարկիմ»։ Քաշի զիմ դանակ, ընկա վըր ըտոնց, հինդ լե մորթեցի ու դանակ լորդեցի դեն։ Սուֆրեն մնաց ըտման լիք, ես հ՚ելա՝ ծաղիկ քաղելեն, խաղ ըսելեն, էս ձորեն, էն ձորեն, էս փոսեն ըն փոս, տափե-տա՚փ էկա, զիս քըցի մըր իտա բախչեն։ Հ՚ելա էկա իմ օթախ, հեչ մարթ լը խապար չէղավ։

Մկա լե իմ հեր զինա, օր ես շատ մաքուր ախչիկ իմ։ Քանի անգամ լը էկան ընձի հ՚ուզելու, հերս լե չը կարդեց։

— Ահա՚ն քըզը հեքաթ, ափո՚։